«Ոզնի» հանրապետական ամենամյա համակարգչային մրցույթ

COMPUTER CONTEST

Մամուլի հաղորդագրություն
02.06.2017

**Կկայանա «ՈԶՆԻ 2017» ամենամյա դպրոցական համակարգչային մրցույթի մրցանակաբաշխությունը**

**Մ/թ հունիսի 6-ին, ժամը 13⁰⁰-ին** Մերգելյան ինստիտուտի **«Երևան Էքսպո»** ցուցահանդեսային համալիրում տեղի կունենա **«Ոզնի» ամենամյա համակարգչային մրցույթի մրցանակաբաշխությանը:**

Մրցույթի նպատակն է

- բացահայտել աշակերտների համակարգչային կարողություններն ու հմտությունները, հնարավորություն տալ նրանց համակարգչային ծրագրերի միջոցով արտահայտելու իրենց նորարարական գաղափարները, ստուգելու սեփական կարողությունները:
- ստեղծել հարթակ մարզերի և մայրաքաղաքի ուսուցիչների համագործակցության և փորձի փոխանակման համար:

Այս տարի մրցույթին մասնակցեցին 6-10-րդ դասարանների շուրջ 300 աշակերտներ Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներից, ինչպես նաև ՀՀ որոշ ուսումնական հաստատություններում գործող ռոբոտաշինության խմբակներից աշակերտներ: Մրցույթի արդյունքում 31 աշակերտ կստանան պատվոգրեր և մրցանակներ, իսկ եզրափակիչ փուլիս մյուս մասնակիցներին կտրվի վկայագրեր:

Այս ծավալի մրցույթն առանձնահատուկ է նրանով, որ մասնակցության վճար չի գանձվում: «Ոզնի» ամենամյա համակարգչային մրցույթն իր ձևաչափով միակն է: Այն խթանում է դպրոցներում ՏՀՏ ոլորտի զարգացմանը: «Ոզնի»-ն ստեղծվել է 2010թ.-ին:

**Հարգանքներով՝ Ռուզան Նիկոյան**

**Մարիաննա Թովմասյան**

**«Ոզնի» համակարգչային մրցույթի հիմնադիր-հեղինակներ**

Աջակիցներ

Հեռ. +37494 51-16-24
+37441 16-27-00
էլ. հասցե՝ vozni.mrcuyt@gmail.com
բլոգ՝ http://vozni-mrcuyt.blogspot.am/